

Ներդիր-թերթիկ՝ տեղեկատվություն հիվանդի համար
ԷՍՊՈՒՄԻԶԱՆ®
40 մգ, փափուկ պատիճներ
Սիմետիկոն

Սույն դեղամիջոցը կիրառելուց առաջ ուշադիր ընթերցեք ամբողջ ներդիր-թերթիկը, քանի որ այն պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկատվություն:

- Սույն դեղամիջոցը միշտ անհրաժեշտ է ընդունել տվյալ ներդիր-թերթիկում շարադրված կամ Ձեր բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին խիստ համապատասխան:
- Պահպանեք ներդիր-թերթիկը: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա այն նորից ընթերցել:
- Եթե Դուք ունեք հարցեր կամ Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն, դիմեք դեղատան աշխատակցին:
- Որևէ կողմնակի ազդեցության առաջացման դեպքում դիմեք Ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցության, այդ թվում նրանց, որոնք սույն ներդիր-թերթիկում նկատագրված չեն:

Սույն ներդիր-թերթիկի բովանդակությունը՝

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Էսպումիզան® դեղամիջոցը և ինչի՞ համար է այն օգտագործվում:
2. Ի՞նչ է պետք իմանալ Էսպումիզան® դեղամիջոցն ընդունելուց առաջ:
3. Ինչպե՞ս կիրառել Էսպումիզան® դեղամիջոցը:
4. Հնարավոր կողմնակի ազդեցություն:
5. Ինչպե՞ս պահպանել Էսպումիզան® դեղամիջոցը:
6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն:

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Էսպումիզան® դեղամիջոցը և ինչի՞ համար է այն օգտագործվում:

Էսպումիզան® դեղամիջոցի ազդող նյութը՝ սիմետիկոնը, վերացնում է աղեստամոքսային տրակտի խանգարումները և օժանդակ նյութ է ախտորոշիչ հետազոտությունների համար: Ազդող նյութը՝ սիմետիկոնը, քայքայում է սննդային շիլայում և մարսողական տրակտի լորձում գտնվող գազի պղպաղակները: Այդ ժամանակ արտազատվող գազերը այնուհետև կարող են ներծծվել աղիքի պատի միջով և դուրս բերվել աղիների պերիստալտիկայի ազդեցության տակ:

Կիրառման բնագավառը

- Գազերի հետևանքով առաջացած աղեստամոքսային տրակտի զանգատների սիմպտոմատիկ բուժման համար, օրինակ՝ փքվածություն (մետեորիզմ) կամ գազերի առատհեռացում, գերլցման զգացողության
- Որովայնի շրջանում ախտորոշիչ հետազոտություններ կատարելու նախապատրաստվելու համար, օրինակ՝ ռենտգեն կամ ուլտրաձայնային հետազոտություն:

Էսպումիզան® դեղամիջոցը կիրառվում է 6 տարեկանից բարձր երեխաների, դեռահասների և մեծահասակների բուժման համար:

Գազառաջացմամբ պայմանավորված զանգատները կարող են լինել աղեստամոքսային տրակտի ֆունկցիոնալ խանգարումների նշան և կարող են ի հայտ գալ ճնշման կամ գերլցման զգացողության, սննդից ժամանակից շուտ հագենալու զգացողության, բղկոցի, փորի գմռոցի, վրնածուխային տեսքով:

Հայտներ բուժող բժշկին, եթե Դուք ավելի լավ չեք գգում, կամ ավելի վատ եք գգում:

2. Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ Էսպումիզան® դեղամիջոցն ընդունելուց առաջ

Մի՛ ընդունեք Էսպումիզանը հետևյալ դեպքերում՝

- Եթե ունեք ավերգիա սիմետիկոնի, դեղին «արևամուտի» FCF (E110), մեթիլպարաաիդոքսիբենզոատի (E 218) կամ տվյալ դեղամիջոցի ցանկացած այլ բաղադրիչի նկատմամբ (թվարկված են բաժին 6-ում):

Նախազգուշացումներ և նախազգուշական միջոցներ

Էսպումիզան® դեղամիջոցն ընդունելուց առաջ խորհրդակցեք բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

Որովայնի խոռոչի կողմից գանգատների ծագման և / կամ դրանց երկարատև բնույթի դեպքում, Դուք պետք է դիմեք բժշկի: Նա կկարողանա հաստատել գանգատների պատճառը և բուժման կարիք ունեցող հնարավոր հիվանդության առկայությունը:

Էսպումիզանը և այլ դեղամիջոցներ

Այլ դեղամիջոցների հետ փոխազդեցության վերաբերյալ տվյալներ չկան:

Հղիություն և կրծքով կերակրման ժամանակաշրջան

Սիմետիկոնի ազդեցության մեխանիզմի և օրգանիզմ աղեստամոքսային տրակտից աննշան ներծծման հետ կապված հղիության և կրծքով կերակրելու ժամանակահատվածում Էսպումիզանի կիրառմամբ առաջացած բացասական ազդեցություններից կարելի է չվախենալ: Հղիների կողմից Էսպումիզանի կիրառման վերաբերյալ կլինիկական տվյալներ առկա չեն:

Ազդեցություն տրանսպորտային միջոցների կառավարման և մեխանիզմների սպասարկման ունակության վրա

Էսպումիզանը չի ազդում կամ աննշան ազդեցություն ունի տրանսպորտային միջոցների կառավարման և մեխանիզմների սպասարկման ունակության վրա:

3. Ինչպե՞ս ընդունել Էսպումիզանը

Տվյալ դեղամիջոցը հարկավոր է ընդունել սույն ներդիր-թերթիկում շարադրված հրահանգին, կամ բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին խիստ համապատասխան: Եթե Դուք համոզված չեք, ապա խորհրդակցեք բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

Դեղաչափում

Խորհուրդ տրվող դեղաչափեր.

Բարձր գազառաջացմամբ պայմանավորված աղեստամոքսային տրակտի կողմից գանգատների առկայության, օրինակ վրճարության (մետեորիզմ) կամ գազերի կուտակման, գերցման գագաղողության դեպքում՝ բուժման համար

Տարիք	Դոզա	Ընդունման հաճախականություն
6 տարեկան–ից բարձր երեխաներ, դեռահասներ և մեծահասակներ	2 պատին (համապատասխանում է սիմետիկոնի 80 մգ)	օրական 3-ից 4 անգամ

Որովայնի խոռոչի շրջանում ախտորոշիչ հետազոտությունների, ինչպիսիք են, օրինակ ռենտգենագրությունն ու սոնոգրաֆիան (ՈՒՁՀ), անցկացմանը նախապատրաստելու համար

Հետազոտությունն անցկացնելուց մեկ օր առաջ	Առավոտյան հետազոտության անցկացման օրը
2 պատիճ օրական 3 անգամ (համապատասխանում է սիմետիկոնի 240 մգ ընդհանուր դոզային)	2 պատիճ (համապատասխանում է սիմետիկոնի 80 մգ)

Կիրառումը երեխաների մոտ

Էսպումիզանը խորհուրդ չի տրվում օգտագործել 6 տարեկանից ցածր տարիքի երեխաներին և նորածիններին: Վաճառքում կան այլ դեղաձևեր:

Կիրառման ձևը

Ընդունեք Էսպումիզանը ուտելիս կամ ուտելուց հետո, անհրաժեշտության դեպքում նաև քնելուց առաջ:

Նշում՝ Էսպումիզանը կարելի է ընդունել նաև վիրահատություններից հետո:

Ընդունեք Էսպումիզանը քանի դեռ կան գանգատներ: Անհրաժեշտության դեպքում Էսպումիզանը կարելի է օգտագործել երկար ժամանակ: Ընթերցեք նաև բաժին 2-ը՝ «Նախագրուշացումներ և նախագրուշական միջոցներ»:

Եթե կարծում եք, որ Էսպումիզանի ազդեցությունը չափազանց ուժեղ է կամ չափազանց թույլ, դիմեք ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին:

Եթե Դուք ընդունել եք Էսպումիզան ® դեղամիջոցը ավելի մեծ քանակությամբ, քան անհրաժեշտ է

Էսպումիզանով գերդոզավորման դեպքում գործնականում թունավորումը բացառված է: Նույնիսկ Էսպումիզանի մեծ քանակությունները խնդիրներ չեն առաջացնում: Էսպումիզանի ազդող նյութը՝ սիմետիկոնը, քայքայում է աղեստամոքսային տրակտում փրփուրը գուտ ֆիզիկական ճանապարհով: Աղիների միջով անցնելիս սիմետիկոնը չի ներծծվում /չի մտնում օրգանիզմի մեջ/ և չի ենթարկվում քիմիական կամ կենսաբանական փոխակերպումների:

Եթե մոռացել եք ընդունել Էսպումիզան ® դեղամիջոցը

Դուք կարող եք բաց թողնված չափաբաժինը ընդունել ցանկացած ժամանակ: Եթե Ձեզ մոտ ծագել են դեղամիջոցն ընդունելու վերաբերյալ լրացուցիչ հարցեր, դիմեք բժշկին կամ դեղատան աշխատակցին:

4. Հնարավոր կողմնակի ազդեցություններ

Սիմետիկոն պարունակող դեղամիջոցների կիրառումից գրանցվել են պերզիկ ռեակցիաներ, ներառյալ եղնջացան, մաշկի ցան, կարմրություն, քոր, պերզիկ դերմատիտ և մաշկի այլ ռեակցիաներ: Առկա տվյալների հիման վրա հաճախականությունը հնարավոր չէ գնահատել (հաճախականությունը հայտնի չէ):

Դեղին «արևամուտ»-ը FCF (E110) կարող է առաջացնել պերզիկ ռեակցիաներ: Մեթիլպարահիդրոքսիբենզոատը (E 218) կարող է առաջացնել բարձր զգայունության ռեակցիաներ, (հնարավոր է՝ դանդաղեցված տեսակի):

Հաղորդումներ կողմնակի ազդեցության մասին

Որևէ կողմնակի ազդեցության առաջացման դեպքում հայտնեք դրա մասին ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցությանը, որոնք նկարագրված չեն սույն ներդիր-թերթիկում: Դուք կարող եք նաև հաղորդել կողմնակի ազդեցության մասին անմիջապես ազգային հաղորդման համակարգի միջոցով:
Հայտնելով կողմնակի ազդեցության մասին, Դուք կարող եք օգնել ավելի շատ տեղեկություններ հավաքել տվյալ դեղամիջոցի անվտանգության մասին:

5. Ինչպե՞ս պահպանել Էսպումիզան® դեղամիջոցը

Սույն դեղամիջոցը պահպանեք երեխաների համար անհասանելի տեղում:

Դեղամիջոցը չօգտագործել բլիստերի կամ ծայած սովարաթղթե տուփի վրա «Պիտանի է մինչև» բառերից հետո նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո: Պիտանիության ժամկետը վերաբերում է նշված ամսվա վերջին օրվան:

Դեղամիջոցը անհրաժեշտ է պահել 30°C ոչ բարձր ջերմաստիճանում:

Դեղամիջոցն օգտահանելիս հարկավոր է խուսափել այն կոյուղի և կենցաղային աղբի մեջ ընկնելուց: Ձեզ չպետքական դեղամիջոցի օգտահանման վերաբերյալ խորհրդակցեք դեղատան աշխատակցի հետ: Այդ միջոցառումները նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն

Էսպումիզան ® դեղամիջոցի բաղադրությունը

Ազդող նյութը սիմետիկոնն է:

Դեղամիջոցի մեկ փափուկ պատիճը պարունակում է 40 մգ սիմետիկոն:

Այլ բաղադրիչներն են.

Մեթիլպարահիդրոքսիբենզոատ (E 218) [Ph. Eur.], ժելատին, գլիցերին (85%-ոց), խինոլինային դեղին (E 104), դեղին «արևամուտ» FCF (E 110).

Էսպումիզան ® դեղամիջոցի արտաքին տեսքը և փաթեթի պարունակությունը՝

Էսպումիզան դեղամիջոցը իրենից ներկայացնում է համարյա կլոր, դեղին, փափուկ ժելատինային պատիճներ, որոնք ունեն կար և հարթ մակերես: Պատիճի պարունակությունն անգույն է և կարող է լինել թեթևակի պղտոր:

Էսպումիզանը բաց է թողնվում՝

25 փափուկ պատիճներով

50 փափուկ պատիճներով

100 փափուկ պատիճներով:

Վաճառքում կարող են լինել ոչ բոլոր չափերի փաթեթներ:

Գրանցման հավաստագրի իրավատերը և արտադրողը՝

Բեռլին-Խեմի ԱԳ

Գլինիկեր Վեգ 125

12489 Բեռլին

Գերմանիա

Ներդիր-թերթիկի վերջին խմբագրության ամսաթիվը՝ 08.2022.